

գիպտական յիշատակարանաց դիմապատկերները (Ք. Ա. 13-րդ դարու գործ) : Յայտնապէս հաւատարիմ նկատումներն են անոնք իրական անձանց... Կրնանք բանաւորապէս ենթադրել որ անոնք կը ներկայացնեն Ք. Ա. 13-րդ դարուն տիրող Քեստական տիպը... Արդ, վերջնագոյն շրջանին համար (ըսենք Ք. Ա. 9-րդ դարուն) ունինք Քարկեմիշի տեղական դիմաքանդակները, բոլորովին տարբեր ձևով : Ի վերջի աստուածն ալ կը վերաբերի այս վերջնագոյն տեսակին, եւ առանց տարակոյսի կը ներկայացնէ Կիլիկիոյ Քեստական բնակչութեան ընդհանուր տիպը... Եթէ ուրեմն, երկու ցեղեր կային՝ կրնանք ընդունիլ, թէ եգիպտական պատկերները կը ներկայացնեն Կովկասէն ներս անցնող եկամուտ յալթական ցեղ մը, որ վերջապէս տիրապետեց բնիկներուն վրայ : Քատէշի պատերազմին մէջ բանակին զօրաց զանգուածը բնականաբար պիտի ըլլար յալթական ցեղէն...» (44, էջ 28) :

Քաուլիի ակնարկած բնիկ ցեղն է Հայատիպը, իսկ յալթական ցեղը՝ Հիւսիսականը :

Պատմական ապացոյցներ եկած են հաստատել հին Հայաստանի բնակչութեանց Ֆիզի-

քական կերպարանաց քննութիւններէն հանուած վերի եզրակացութիւնը, այսինքն թէ՛ Ք. Ա. դոնէ 1500-ական թուականներէն սկսեալ Արիականներէ կը բաղկանար իշխանական դասակարգը Տիտանեան կամ Թորգոմեան թագաւորութեանց, մինչդեռ սկիզբէն մինչեւ վերջ Հայատիպերէ կը բաղկանար ամբողջ այս երկիրներու ժողովրդային զանգուածը :

Եւ ճիշդ միեւնոյն կացութիւնը կը տիրէր հայոց թագաւորութեան ամբողջ շրջաններուն — Արիական եկամուտ ժողովրդոց շառաւիղներն էին հայոց արքայական ու նախարարական տուններն, իսկ Հայատիպ ցեղին ծնունդն էր ժողովրդային մեծագոյն զանգուածը :

Տունն կամ Տոհմն Թորգոմայ ըսելով, ուրեմն, պիտի հասկնանք մասնաւորապէս լեռնային Կիլիկիոյ դաւառաց վրայ իշխող թագաւորական հարստութիւն մը, որու տիրապետող ազնուապետական դասակարգը առաւելապէս կը բաղկանար Արիական եկամուտ ժողովուրդի մը սերունդներէն, տիրողաբար Հիւսիսական ցեղային յատկանիշներով, եւ որու ժողովրդային զանգուածը կը բաղկանար բնիկ Հայատիպ ցեղէն :

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

Գրեց՝ Ա. Ա.

Armeniaca (Հայկականի) — Հայագիտական նոր հանդէս գերմաներէն լեզուով, խմբագրութեամբ Դ-ր Կարլ Ռոթի : Գիրք առաջին) .

Ոչ մի եւրոպական երկրում հայագիտութիւնը այնչափ ուշադրութեան չի արժանացել սկզբից իսկ որչափ՝ Գերմանիայում : Եւրոպացի ամենայայտնի հայագէտները գերմաններ են եղած :

Մի ժամանակ ծանօթ լեզուաբան եւ հայագէտ պրոֆ. Նիկ. Ֆինկ մինչեւ իսկ հիմք դրաւ հայագիտական յատուկ հանդէսի, որ դժբախտաբար միայն կարճատեւ կեանք ունեցաւ : Ինքը՝ հանճարեղ գիտնականն էլ — նա վերջը Բերլինի համալսարանի ուսուցչապետ էր — վաղաժամ մահացաւ, իր կեանքի ամե-

նաբեղմնաւոր շրջանում : Նրա յաջորդն է այժմ՝ ծանօթ հայագէտ Մարքվարթը :

Հրատարակի վրայ է այժմ գերմաներէն լեզուով լոյս տեսնող հայագիտական մի նոր հանդէս Armenica անունով (Հայկականի), հրատարակութեամբ Լայպցիգի Asia Major ծանօթ հրատարակչական տան, ուր լոյս է տեսնում նաեւ յատկապէս Կովկասի եւ կովկասեան ժողովուրդների ուսումնասիրութեան նուիրուած մի ուրիշ գիտական հանդէս — Caucasiaca (խմբագրութեամբ Դ-ր Դիրրի) :

Հայագիտական նոր հանդէսի խմբագիրն է Դ-ր Կարլ Ռոթ : Վերջինս Միւնխէնի գիտնականներից է, հայագիտական ասպարէզում գրեթէ նոր մարդ : Ինքը բիւզանդագէտ է, ունի նաեւ Armenien und Deutschland (Հա-